թեան Լաստիվերտցւոյն (գլ. ԺԷ) «Երանելի «այրն Աստուծոյ՝ մեծն Գրիգորիոս, իջեալ «ի խորութիւն վիրապին՝ զՀնգետասան ամ «փորձեաց, և ի վերայ Արարատեան աթո- «ռոյն՝ եդ զաթոռ իւր»։

Շարայարելի Հ. Ղ. Վ. Մ. ԱԼԻՇԱՆ

---

# ԼՈԽՍՏԱՓԱՆՈՒԹԻՒՆ

## ԽԱԶԻՑ ԵՒ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՇԱՐԱԿԱՆԱՑ

(Շար. տես էջ 460)

### ԳԼՈՒԽ Գ.

### Ձայնաստիճան ցուցընող նշանք.

Առոգանութեան մէջ ձայնը ինքնաբերաբար այլեւայլ վանկերու վրայ կը բարձրանայ ու կը ցածնայ, որով ձայնի եղանակաւորում մը յառաջ կու գայ. և ասոնց նշաններն են շեշտն ու բութը։ Դիւրին է երեւակայել թէ ինչպէս հնարուած են անոնք. երբ հարկ էր նշանակել բարձրացումն ձայնի՝ գրողը բնական կերպով բարձր գիծ մը կը քաշէր վանկին վրայ, որ է շեշտը. իսկ երբ ցածցունել զձայնը՝ գիծ մը կը քաշէր վանկին վրայ զէպ ի վար՝ որ է բութը։ Երգեցողութեան մէջ ալ որովհետեւ ճիշդ նոյն գործը կը կատարուի, ամենաբնական կերպով կ'երեւի որ նոյն նշանները գործածեր են։

Այսպէս հին ատեն Լատինք երգ մը գրի վրայ առնլոյ համար, թէպէտ այլեւայլ կերպեր հնարած են, բայց սովորականն և ընդհանրացածը նշաններ էին, զորս բառերուն վրայ կը դնէին և neume (խազք) կը կոչէին, և իրենց յատուկ ձեւովը կը զանազանէին որ և է գրոց տառերէ։ Այս neume ըսուած խազերուն գլխաւոր հիմունքն (virga) շեշտ (ʹ) և (punctum) բութ (ʽ) նշաններն են. շեշտը՝ ձայնը բարձրացունելու նշան է. իսկ բութը՝ ցածցունելու նշան։ Միացնելով այս երկու նշանները՝ առաջ կու գայ երրորդ ձեւով նշան մը (ʼ) զոր իրենք (clivis) կը կոչեն, որ է մեր փշաքարձը, ինչպէս նոյնին ներհակը (✓) զոր (podatus) կը կոչեն՝ որ է մեր փուշը։ Այս շեշտերուն և բութերուն այլ և այլ դասաւորութիւն տալով, շատ ձեւեր առաջ եկան, և իրենց յատուկ անուններ ունեցան, և ամէնը մէկէն neume կոչուեցան. ինչպէս պիտի տեսնենք յետագայ ցուցակին մէջ։

Այսպէս և մեր Շարականք ունին իրենց խազերը, որոնք Լատինաց պէս բառերուն վրայ կը գրուին. և անոնց պէս շեշտը (ʹ) ձայնը բարձրացունելու նշան է, իսկ բութը (ʽ) ցածցունելու նշան, ինչպէս կ'ուսուցանէ նաեւ Յովհան Երզնկացին իր Քերականութեան մէջ, ըսելով «Զի որպէս նա (շեշտն) ի վեր հանէ, սա՝ (բութն) ի խոնարհ նմանապէս զիջուցանելով»։ Այս երկու նշաններն են և ի մեզ գլխաւոր հիմունք՝ որովք կը ձեւանան և այլ բազմաթիւ խազք. զորօրինակ փուշը (✓), փշաքարձը (ʼ), ներքնախաղը (~), վերնախաղը (˜), զարկը (ʼ), բենկորճը (ʃ), և այլն։

Դնենք արդ յետագայ ցուցակը, առնելով զայն մեծանուն Հ. Յովսէփ Պօթիէ բենեդիկտեան կրօնաւորի բազմահմուտ գրքէն, յորում կը նշանակէ Լատինաց բոլոր neume ըսուած խազերը, իրենց անուամբք և ձեւերով և զօրութեամբ. և անոնց զիմաց մեր շարականաց համապատասխան խազերը. և յայտնի պիտի տեսնուի թէ՝ նոյն օրէնքով շինուած են երկուքն ալ, և նոյն ձեւերով. և իրենց հիմնական նշանները նոյն զօրութիւնը ունեցած ժամանակ, անտարակուսելի է անոնցմով ձեւացած միւս խազերուն ալ համազօր ըլլալը։ Միայն պիտի տեսնենք որ Լատինաց շեշտով ու բութերով ձեւացած շատ մը խազեր, զորս իրենք զատ զատ կը գրեն, մեր Հարքը միացուցեր են շեշտն ու բութերը, և վերնախաղի ու ներքնախաղի ձեւեր տուեր են. թերեւս պարզագոյն և լաւագոյն համարելով այնպէս գրել, որովհետեւ բոլորը մէկէն մէկ խազ մը կը կազմեն և անբաժան կ'երգեցուին. ինչպէս /∴ elimacus resupinus ըսուած խազը՝ թէպէտ չորս զանազան կտորներէ կազմուած է՝ այլ մէկ խազ մը կը ձեւացունէ։ Սակայն պէտք է գիտնանք, որ մեր խազերուն մէջ ալ կը գտնուին Լատինաց պէս՝ քանի մը կտորներէ ձեւացած մէկ խազ, զորօրինակ ~ ∴ ʼ, և այլն։

digitised by A.R.A.R.@

| Լատին եկեղեցւոյ neume կոչուած սովորական խազերը, և անոնց զօրութիւնը։ | | Անոնց համապատասխանող Շարականաց խազերը։ | |
|---|---|---|---|
| 1 Punctum | Բութ | Բութ | |
| 2 Virga | Շեշտ | Շեշտ | |
| 3 Clivis | Շեշտ և բութ միացած | Փշաղարձ | Շեշտ և բութ միացած |
| 4 Podatus | Բութ և շեշտ միացած | Փուշ | Բութ և շեշտ միացած |
| 5 Scandicus, Salicus | Երկու բութ և շեշտ | Ձարկ | Երկու բութ և շեշտ |
| 6 Climacus | Շեշտ և երկու բութ | Վերնակէտ կամ փոքր վերնախաղ | Շեշտ և երկու բութ |
| 7 Torculus | Բութ, շեշտ և բութ | | Բութ, շեշտ, բութ |
| 8 Porrectus | Շեշտ, բութ և շեշտ | | Շեշտ, բութ և շեշտ |
| 9 Podatus subpunctis | Բութ, շեշտ և երկու բութ | | Բութ, շեշտ, երկու բութ |
| 10 Climacus resupinus | Շեշտ, երկու բութ, շեշտ | | Շեշտ, երկու բութ, շեշտ |
| 11 Scandicus flexus | Երկու բութ, շեշտ, բութ | | Երկու բութ, շեշտ, բութ |
| 12 Scandicus subpunctis | Երկու բութ, շեշտ, երկու բութ | | Երկու բութ, շեշտ, երկու բութ |
| 13 Torculus resupinus | Բութ, շեշտ, բութ, շեշտ | | Բութ, շեշտ, բութ, շեշտ |
| 14 Porrectus flexus | Շեշտ, բութ, շեշտ, բութ | Բենկորձ | Շեշտ, բութ, շեշտ, բութ |
| 15 Porrectus subpunctis | Շեշտ, բութ, շեշտ, երկու բութ | | Շեշտ, բութ, շեշտ, երկու բութ |
| 16 Podatus subtripunctis | Բութ, շեշտ, երեք բութ | | Բութ, շեշտ, երեք բութ |
| 17 Virga subtripunctis | Շեշտ, երեք բութ | Վերնախաղ | Շեշտ, երեք բութ |
| 18 Scandicus prætripunctis | Երեք բութ, շեշտ | Ներքնախաղ | Երեք բութ, շեշտ |
| 19 Virga combipunctis | Երկու բութ, շեշտ, երեք բութ | | Երկու բութ, շեշտ, երեք բութ։ |

digitised by A.R.A.R.@